ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՄՆԵՐ

Ի 27ն Յունիսի սարկաւագութեան աստիճան ընկալան Կարապետ Յ. Մարկոսեան Էրապկերցի և Կարապետ Տ. Մինասեան Պարտիզակցի.

իսկ 'ի 4ն ներկայ ամսոյս, 'ի տունի Պայծառակերպութեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, կոչեցան յաստիճան քահանայութեան և 'ի վարդապետութիւն եօթն սարկաւագունք և մի քահանայ, որոց անուանքն եւս փոփոխեցան և են այսոքիկ.

Սարկաւագ	Սարգիս Պրուսացի	Յովհաննէս	վարդապետ.	
" "	Յակոբ Կ. Պոլսեցի	Գաբրիէլ	"	"
" "	Գրիգոր Տէրէվանքցի ('ի Կեսարիոյ)	Դանիէլ	"	"
" "	Մկրտիչ Տիգրանակերտցի	Մաղաքիա	"	"
" "	Սահակ Կ. Պոլսեցի	Սարգիս	"	"
" "	Պետրոս Ղուրտպէլէնկցի	Էմբակում	"	"
" "	Կարապետ Էրապկերցի	Մամբրէ	"	"
Տէր Մխիթար քահանայ	Մոկացի	Մխիթար	"	"

Ս. Աթոռս իւր վարդապետ միաբանից թիւը աւելցնելով կը յուսայ ոչ միայն ամեն աթոռապատկան պաշտօնները անթերի և կանոնաւոր կերպիւ կատարել, այլ և ձեռնհասութիւն և միջոց ունենալ իւր մի ամենավսեմ և նուիրական պարտքը կատարելու, որ է 'ի պահանջիլ հարկին եկեղեցական պաշտօնեաներ տալ Ազգ. Վարչութեանը, և ժամանակ առ ժամանակ քարոզիչներ ղրկել Հայաստանի գաւառներն և այլ հայաբնակ քաղաքներն ու աւանները, և այսպէս հայազգի ժողովուրդը մխիթարել հոգեւոր մխիթարութեամբ։ Այն նուիրական պարտուց կատարումը խիստ զգալի է Ս. Աթոռոյս Ամեն. Նախագահին և համարէն առաքելական Ուխտին համար, ուստի և քաջայոյս ենք, որ ամենակարող աջակցութեամբ Բարձրելոյն պիտի յաջողուի պսակել այս սուրբ իղձերը և փափաքները 'ի հոգեւոր շինութիւն Ազգին և 'ի պայծառութիւն Հայաստանեայցս առաքելական Ս. Եկեղեցւոյ։

— Լատինք, ամսոյս 13ին, գիշերային նոր հրաշք մի գործեցին Ռէթղէհեմի մէջ։ Բառասնից այրը, որ, ըստ վաւերական հրովարտակաց, երեք ազգաց (Հայոց, Յունաց և Լատինաց) սեպհականութիւն է և հակառակութիւն պատճառաւ պարիսպը կիսաքանդ մնացած էր, գիշերը գաղտնածածուկ ջանիւք նորոգեցին Լատինք և երկաթեայ դուռն կախելով զարմացուցին բոլոր Երուսաղէմը, փոխանակ ներկային՝ 1865 թուականը արձանագրելով պարսպի վրայ, որպէս թէ վաղուց շինած են։ Այս հրաշքը կատարեցին այն գիշերը, երբ արդէն բացասութիւն եղած էր իրենց, որ բնաւ իրաւունք չունին Ս. Յակոբեայ տաճարին մէջ պատարագելու։ Սակայն անտարակոյս ենք որ, Տեղւոյս Վսեմ. Կուսակալն և երկուց միաբանութեց կողմէն ձեռք առնուած միջոցներով, շուտով պիտի կործանի գիշերային հրաշալիքը եւ ցերեկեան լուսով նոր պարիսպ պիտի շինուի, իբրեւ սեպհականութիւն երեք ազգաց։

digitised by A.R.A.R.@